ՀԱՆԳԻՍՏ ՔՐԻՍՏՈՍՈՒՄ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ողջ պատմության ընթացքում, Աստված «ճանապարհային քարտեզ» է տվել մարդկանց՝ կանխասելով տարբեր նշաններ և պայմաններ Իր մարգարեների միջոցով: Մարդիկ պետք է ուշադրություն դարձնեին մարգարեների խոսքերին, որպեսզի ճանաչեին և հավատային Մեսիային: Այս նշանները և մարգարեությունները տրվել են մեզ Հին Կտակարանում՝ Աստվածաշնչի այն մասում, որը գրվել է մինչև Հիսուսի ծնունդը: Այն գրվել է մինչև մ.թ.ա. 450 թվականը՝ Հիսուսի ծնունդից հարյուրավոր տարիներ առաջ, և պարունակում է ավելի, քան 300 մարգարեություն, որոնք կատարվեցին Հիսուսի կյանքի, մահվան և հարության միջոցով: **Մաթեմատիկորեն ասած, այս բոլոր մարգարեությունների իրականացումը մեկ մարդու կյանքում ապշեցուցիչ է: Մաթեմատիկոսներն այսպես են ձևակերպում սա.**

- **Եթե մեկ մարդու կյանքում կատարվեր այս մարգարեություններից 8-ը, դա կարող էր տեղի ունենալ 100.000.000.000.000.000-ից 1 դեպքում:**
- **Եթե մեկ մարդու կյանքում կատարվեր այս մարգարեություններից 48-ը, դա կարող էր տեղի ունենալ 10^{157} (1 և 157 հատ զրո)-ից 1 դեպքում:**
- **Իսկ 300-ից ավելի մարգարեություն... դա կարող էր տեղի ունենալ միայն Հիսուսի կյանքում:**

Նոր Կտակարանը գրվել է Հիսուս Քրիստոսի մահից հետո: Հնէաբանները Նոր Կտակարանի հազարավոր ձեռագրեր են հայտնաբերել, որոնցից մի քանիսը թվարկվում են պակաս քան հարյուր տարի անց նորկտակարանյան նամակների գրության տարեթվերից: Պատմական վավերականության տեսանկյունից, Աստվածաշունչը գերազանցում է բոլոր հին գրվածքները:

ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՏԱՐՎԵՑԻՆ ՀԻՍՈՒՍԻ ԿՅԱՆՔՈՒՄ

1. Մեսիան կծնվի Բեթլեհեմում - Միքիա 5:2

   Եւ դու, ով Բեթլէհէմ Եփրաթա, փոքր ես Յուդայի հազարաւորների մէջ, սակայն քեզանից պիտի դուրս գայ ինձ համար նա որ իշխան լինի Իսրայէլին, եւ նորա ելքը վաղուց՝յաւիտենական օրերից է:

2. Մեսիան կծնվի կույսից - Եսայի 7:14, Եսայի 9:6-7
3. Մեսիան մարգարե կլինի՝ Մովսեսի պես - Երկրորդ Օրինաց 18:15, Հովհաննես 7:40-42, Գործք 3:20-23
4. Մեսիան կգայթակղվի սատանայից - Սաղմոս 91:10-12

5. Մեսիան հաղթական մուտք կգործի Երուսաղեմ - Զաքարիա 9:9
6. Մեսիան կմերժվի Իր իսկ ժողովրդի կողմից - Եսայի 53:1,3
7. Մեսիան կմատնվի Իր հետևորդներից մեկի կողմից - Սաղմոս 41:9, Սաղմոս 55:12-13
8. Մեսիան կկանգնի ատյանի առջև ու կդատապարտվի - Եսայի 53:8
9. Մեսիան լուռ կլինի Իրեն մեղադրողների առջև - Սաղմոս 35:11, Եսայի 53:7-8
10. Մեսիային կզարկեն և Նրա վրա կթքեն - Միքիա 5:1, Եսայի 50:6
11. Մեսիային կծաղրվի - Սաղմոս 22:7-8
12. Մեսիան կմահանա խաչելությամբ՝ խոցված ձեռքերով և ոտքերով - Սաղմոս 22:14-16
13. Մեսիան կչարչարվի մեղավորների հետ - Եսայի 53:12

Եսայու մարգարեության մասին

14. Մեսիայի զգեստները կբաժանվեն՝ վիճակ գցելով - Սաղմոս 22:18
15. Մեսիայի ոսկորները չեն կոտրվի - Թվոց 9:12 -
16. Մեսիան կմահանա՝ որպես մեղքի զոհ - Եսայի 53:5-6,8,12
17. Մեսիան կտեսնի Իր սերունդը - Եսայի 53:10-11
18. Մեսիան կթաղվի հարուստ մարդու գերեզմանում - Եսայի 53:9
19. Մեսիան հարություն կառնի մեռելներից - Սաղմոս 16:10, Սաղմոս 30:3

Բանալի խոսք.

Զգո՛յշ լինենք ուրեմն, որ նրա հանգստի մէջ մտնելու խոստումից, որ տրուած է մեզ, ձեզնից որեւէ մէկը չզրկուի. 2 քանզի ավետուած է, ինչպէս եւ նրանց: Բայց խօսքը
լսելը չօգնեց անապատում եղողներին, որոնք հավատով չլսեցին այն:
3 Իսկ մենք, որ հաւատացինք, մտնելու ենք այդ **հանգստի մէջ**, ինչպէս որ նա
ասաց. 4 Որովհետեւ մէկ տեղ (Ծննդոց 2:2) **եօթներորդ** օրուայ համար այսպէս է
ասում. Եւ Աստուած եօթներորդ օրում հանգիստ առաւ իր բոլոր գործերից:
11 Ուրեմն ջանանք այն հանգստի մէջ մտնելու. Եւ այստեղ դարձեալ ասում է, թէ՝
չպիտի մտնեն իմ հանգստի մէջ: 7 Եւ արդ, քանի որ ոմանց արգելուել էր մտնել
նրա մէջ, եւ նրանք էլ, որոնց նախապէս աւետուել էր, չմտան անհնազանդութեան
պատճառով, 8 դարձեալ նա մի ուրիշ օր է սահմանում, Այսօրը. երկար ժամանակ
յետոյ ասում է, ինչ որ Դաւթի բերանով ասուել է աւելի առաջ. 9 Որովհետեւ, եթէ
Յեսուն դրանց հանգիստ տուած լինէր, ապա դրանից յետոյ Աստուած ուրիշ օրուայ
մասին չէր խօսի: 10 Արդ, ուրեմն, Աստծու ժողովրդի համար դեռ մնում է մի ուրիշ
հանգստի օր. 11 որովհետեւ, ով մտնում է նրա հանգստի մէջ, նա հանգստանում է
իր գործերից, ինչպէս Աստուած էլ հանգստացաւ իր գործերից: 12 Ջանանք,

ուրեմն, մտնել այդ հանգստի մէջ, որպէսզի որեւէ մէկը նոյնօրինակ անհնազանդութեան մէջ չընկնի: **Եբր. 4:1**

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ ԱԴԱՄԻՑ ՄԻՆՉև ԱԲՐԱՀԱՄ

1. **Ադամից մինչև Ենովք = 7 սերունդ** (Ենովքին Աստված վերցրեց երկրի վրայից)
2. **Մաթուսաղայից մինչև Սաղա = 7 սերունդ** (Մաթուսաղան մահացավ նույն ջրհեղեղի տարում, իսկ Նոյը փոխանցեց խոսքը Եբերին ու Աբրահամին, ինչպես Ենովքը Մաթուսաղային)
3. **Եբեր մինչև Աբրահամ = 7 սերունդ**

ՍԵՐՈՒՆԴՆԵՐԸ ԱԲՐԱՀԱՄ ՄԻՆՉև ՀԻՍՈՒՍ

1. **Աբրահամից մինչեւ Դաւիթը** բոլոր սերունդները՝ = տասնչորս սերունդ.
2. **Դաւթից մինչեւ Բաբելոնի** մէջ գերութիւնը՝ = տասնչորս սերունդ
3. **Բաբելոնի մէջ գերութիւնից մինչեւ Քրիստոս՝** = տասնչորս սերունդ: